ՀԱՐԱԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

ԱՄԱԼՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ԹՈԽՄԱԽՅԱՆ

Մարդկանց հաղորդակցման առաջնային և ամենաէական միջոցը հնչյունական լեզուն է։ Սակայն ըստ անհրաժեշտության այն փոխարինվում կամ լրացվում է այլ կարգի միջոցներով։ Վերջիններս, եթե նկատի չունենանք գրավոր լեզուն և հաղորդակցումն իրականացնող տեխնիկական միջոցները, այսպես կոչված հարալեզվական նշաններ են, որոնք լինում են երկու տեսակ՝ շարժանշաններ (ժեստեր) ու դիմախաղ։ Հարալեզվական միջոցները կարող են լինել պայմանական և ոչ պայմանական։ Պայմանական են այն շարժանշանները, որոնք գործածվում են այս կամ այն մշակութային շրջաններում և հասկանալի են տվյալ հանրության անդամներին, իսկ ոչ պայմանական՝ «մարմնի և հատկապես՝ դեմքի զանազան շարժումները, որոնք հանդես են գալիս որպես մարդկային զանազան հույզերի ակամա արտահայտություններ»[1]։

Լեզվաբանությունը ուսումնասիրում է պայմանական բնույթի շարժանշանները, որոնք ունեն հաղորդակցական յուրահատուկ բովանդակություն մարդկային հասարակության որոշակի խմբի կամ հանրության համար, մինչդեռ ոչ պայմանական շարժանշանները կապվում են ընդհանրապես մարդու հոգեվիճակի հետ և դուրս են լեզվաբանության ուսումնասիրության շրջանակներից։ Եվ, իրոք, զգացմունքների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ուրախությունը, զայրույթը, զարմանքը, սարսափը, թախիծը համամարդկային են և իրենց արտահայտությունն են գտնում դիմախաղում, շարժանշաններում, անհոդաբաշխ ձայներում և հնչերանգում՝ անկախ լեզվական նյութից։ Այդ պատճառով խոսողի հոգեկան նմանօրինակ վիճակների մասին կարելի է ենթադրել չիմանալով ո՛չ հաղորդման բովանդակությունը, ո՛չ էլ խոսողի լեզուն։ Այս առումով հարալեզվական միջոցները միշտ չէ, որ ծառայում են զգացմունքների արտահայտմանը, այլ կարող են կենդանի խոսքում ուղեկցել զգացական տեսակետից գրեթե չեզոք արտահայտությունների։ Հետևաբար, հարալեզվաբանության մեջ ուսումնասիրվող դիմախաղերն ու շարժանշանները անմիջականորեն կապվում են այս կամ այն լեզուն կրող անհատների առանձնահատկությունների հետ։ Դրանք պայմանավորված չեն հաղորդման բովանդակությամբ՝ լայն առումով, այլ փաստորեն հանդես են գալիս որպես այդ լեզուներում օգտագործվող կարգավորված պայմանական նշանների համակարգ։

Գոյություն ունեն հարալեզվաբանության, նրա ծավալի ու բովանդակության որոշման տարբեր ըմբռնումներ։ Այսպես, անգլիական հնչյունաբանների

---

1 Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, էջ 121։

կարծիքով հարալեզվական միջոցների մեջ են մտնում ձայնային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ծիծաղը, լացը, թատերական շշուկը, խոսքային արտահայտությանը ուղեկցող հիմնական տոնի կտրուկ անցումները, ինչպես նաև ձայնարկությունները, հազը, փռշտոցն ու արտասանվածքի տեմբրը։ Թրեյգերի կարծիքով հնչյունային խոսքին ուղեկցող զգացական լեզվում սկսած է տարբերել հարալեզվական երկու կարգի միջոցներ՝ ձայն պարունակող (ծիծաղ, լաց, շշուկ, հազ և այլն) և ձայնային (տեմբր, հիմնական տոն)[2]։ Այս ըմբռնման դեպքում դիմախաղերը և շարժանշանները դուրս են մնում հարալեզվաբանության բնագավառից, և այնտեղ են մուտք գործում զուտ ֆիզիոլոգիական բնույթի երևույթներ՝ հազ, լաց, փռշտոց և այլն։ Վերջիններս չեն կապվում խոսքի հաղորդակցական բնույթի հետ։

Որոշ հեղինակներ հարալեզվաբանության ոլորտն են ընդգրկում նաև բառային և քերականական տարրերը՝ մեծ չափով ընդլայնելով հարալեզվաբանության շրջանակները։ Հարալեզվաբանություն ասելով պետք է հասկանալ պայմանական նշանների մի այնպիսի համակարգ, որը օգտագործվում է հաղորդակցության ընթացքում որպես խոսքային լեզվի օժանդակ միջոց[3]։ Այստեղ առաջին հերթին պետք է նշել դիմախաղը, շարժանշանները և որոշ ձայնարկություններ, որոնք ուղեկցում են մարմնի շարժումներին։ Խոսքի հիմնական տոնի փոփոխության, տեմբրի և այլ ձայնային հատկանիշների ուսումնասիրությունը կարելի է կատարել արտասանվածքի հնչյունական ուսումնասիրության ժամանակ, իսկ լացի, հազի և համանման այլ երևույթների ուսումնասիրությունը լեզվաբանության խնդիրների ու նպատակների մեջ չի մտնում։ Հարալեզվական միջոցները ինչ-որ չափով լրացնում են լեզվաբանական ինֆորմացիան, առանձին դեպքերում կարող են փոխարինել լեզվական նշանը՝ «խախտելով բառային հաղորդակցումը», սակայն մեծ մասամբ դրանք ուղեկցում են խոսքային հաղորդակցմանը[4]։

Ներկա հոդվածում փորձել ենք հավաքել ու նկարագրել հայերի կողմից օգտագործվող ամենագործածական շարժանշանները, ըստ հնարավորին առանձին բացատրությունների կցելով նկարներ։

Մարդիկ շարժանշաններ օգտագործում են ոչ միևնույն չափով և ոչ բոլոր իրավիճակներում։ Դրանց օգտագործումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ մարդու խառնվածքով, դաստիարակությամբ, կրթության աստիճանով, զգացմունքայնությամբ, խոսքային իրավիճակով և այլն։ Տարիներ շարունակ երեխաներին սովորեցնում են մտքերն արտահայտել առանց ավելորդ շարժումների։ Դպրոցներում արգելվում են հատկապես ցուցական շարժանշանները. կիրթ մարդիկ խոսելու ժամանակ աշխատում են խուսափել նման շարժումներից։ Ծայրահեղ զուսպ խոսքը ընդհանրապես պակաս հուզական է և նվազ արտահայտիչ։ Դրանում համոզվելու համար բավական է այն համեմատել քիչ կրթված մարդու խոսքի հետ, որը ուղեկցվում է դիմա-

---

2 Հմմտ. Г. В. Колшанский, Соотношение субъективных и объективных факторов в языке, М., 1975, стр. 213.

3 Նույն տեղում, էջ 217։

4 Г. В. Колшанский, Паралингвистика, М., 1974, стр. 7.

խաղով ու շարժումներով, և որն ունի հնչերանգային ձայնածավալի մեծ տատանումներ։

Հայաստանի հեռավոր շրջաններում, այսինքն՝ քաղաքային կյանքից ավելի կտրված վայրերում ապրող մարդկանց խոսքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք իրենց զգացմունքներն արտահայտելիս ավելի ազատ են օգտվում հաղորդակցության ոչ բառային միջոցներից։ Որոշ գյուղերում դեռևս կարելի է հանդիպել «մունջ» («համր», «անխոս») հաղորդակցման՝ միայն նշանների ու շարժուձևերի միջոցով.

Հարաբերական միջոցների օգտագործումը մեծապես կախված է անհատի խառնվածքից։ Կան մարդիկ, որոնք պարզապես չեն կարող խոսել առանց դիմախաղերի, շարժուձևերի և ամբողջ մարմնի շարժման։ Կան և այնպիսիները, որոնք ավելի զուսպ են իրենց զգացմունքների արտահայտման մեջ։ Սակայն, սովորաբար, բոլորին հասկանալի են տվյալ հանրության մեջ ընդունված այս կամ այն շարժանշանի իմաստն ու նշանակությունը։

Որոշակի խոսքային արտահայտությանը փոխարինող շարժանշանների կողքին կան այնպիսիները (դրանք մեծամասնություն են կազմում), որոնք ուղեկցում են խոսքին և ինչ-որ մասով ավելի արտահայտիչ դարձնում այն։ Կան և այնպիսիները, որոնք ուղեկցվում են խոսքային որոշակի կաղապարներով (շտամպներով) կամ ձայնարկություններով։ Ելնելով սրանից, շարժանշաններն՝ ըստ իրենց ինքնուրույնության աստիճանի, կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) ինքնուրույն, բ) խոսքն ուղեկցող և այն ավելի արտահայտիչ դարձնող և գ) խոսքային որոշակի կաղապարներն ու ձայնարկություններն ուղեկցող շարժանշաններ։ Ամեն մի խմբի ներսում՝ ըստ իմաստային ընդհանրության, կարելի է առանձնացնել որոշակի ենթախմբեր։

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՇԱՐԺԱՆՇԱՆՆԵՐ

Զարմանքի և չիմացության արտահայտություն

1. Ուսերի թոթվում, որի ժամանակ գլուխը թեթևակիորեն թեքվում է մի կողմ, ունքերը բարձրանում են, շրթունքները մի փոքր առաջ են ձգվում, իսկ նրանց եզրերը նկատելիորեն իջնում։ Այս նշանը հաճախ փոխարինում է «Չգիտեմ» կամ «Ես որտեղի՞ց գիտեմ» արտահայտությանը։

2. Ունքերի բարձրացումը և շրթունքների սեղմումը նույնպես նշանակում է «Չգիտեմ», բայց սա նախորդի համեմատությամբ արտահայտության ավելի թույլ աստիճան է։

3. Վերը նկարագրված դիմախաղին, երբ միանում է ձեռքի կիսաբաց ափերի շրջումը, ապա ստանում ենք զարմանքի ու չիմացության առավել ուժեղ արտահայտություն (նկ. 1)։

Ժխտման, չհամաձայնության, չիմացության շարժանշաններ

4. Գլխի շարժումը մի կողմից մյուսը նշանակում է «Ոչ», «Չգիտեմ», «Չեմ ցանկանում», «Համաձայն չեմ»։ Երբեմն գլխի շարժման հետ միաժամանակ փակում են աչքերը։ Աչքերի փակումը առանց գլխի շարժման համա-

ձայնության նշան է։ Մի աչքի փակումը շրջապատի մարդկանցից գաղտնի համաձայնության նշան է։

5. Ձեռքի ծալումը կրծքի մոտ և ափի արագ շարժումը ներսից դուրս նշանակում է «Գնա՛», «Հեռացի՛ր»։ Նույն դիրքով ձեռքի ափի մի քանի անգամ տատանումները կարող են նշանակել «Ես համաձայն չեմ», «Ինձ մի խառնեք այդ գործին», «Ինձ հանգիստ թողեք» և այլն։

Նկ. 1

Նկ. 2

6. Ժխտման համար օգտագործվում է լեզվի և կոշտ քիմքի հպումից՝ օդի ներս քաշումով առաջացած պայթյունի նմանվող մի ձայն, որի ժամանակ ձայնալարերը չեն թրթռում։ Հաճախ այն չի ուղեկցվում ոչ մի դիմախաղով, իսկ երբեմն արտահայտվում է երեսի ջղաձգմամբ ու աչքի կկոցումով։ Օդի ներշնչման հետևանքով առաջացած պայթական ձայնը «ՏՍԸ» հնչման տպավորություն է թողնում։ Սա շատ կարճ ու կտրուկ «Ոչ» է, օգտագործվում է մտերմիկ շրջապատում, երբ լսողը խոսելու ցանկություն չունի և խոսակիցը գտնվում է բավական մոտ տարածության վրա։

7. Կասկածանքով ժխտումը արտահայտվում է գլխի թեթևակի տատանումներով, դիմախաղով, աչքերի կկոցումով և ներքևի շրթունքի դուրս ցցմամբ։ Կարող է նշանակել «Հավանական չէ», «Չեմ կարծում, որ այդպես լինի» և այլն։

Վերաբերմունքի շարժանշաններ

8. Գլխով դրական նշան ցույց տալ՝ խոնարհելով մեկ կամ մի քանի անգամ։

9. Բավական լայն տարածում ունի գլխի խոնարհմանը ուղեկցող «Ըհը՛» ձայնարկության արտաբերությունը, որը նշանակում է «Այո»։ Երբեմն ձայնարկությունը արտաբերվում է առանց որևէ լրացուցիչ շարժման՝ նույն նշանակությամբ։ Ժխտման ժամանակ օգտագործվում է «Հը-ը» երկվանկ արտա-

բերությունը, իսկ զարմանքի դեպքում «Հը՞» արտահայտությունը։ Բոլոր նշված ձայնարկությունների արտաբերությանը մասնակցում է ռնգային արձագանքարանը։

Սպառնալիքի շարժանշաններ

10. Ցուցամատի թափահարում, երբ խոսակիցը գտնվում է համեմատաբար ոչ մեծ հեռավորության վրա։ Համազոր է «Ես քեզ ցույց կտամ» իմաստին։

Սպառնալիքի համեմատաբար ավելի ուժեղ աստիճան է բռունցքի կամ բռունցքների թափահարումը։ Այս շարժանշանը ավելի շուտ ուղղվում է հեռավորության վրա գտնվող մարդու հասցեին։ «Կսպանեմ», «Կշարդեմ» և այլն։ Հաճախ ուղեկցվում է այլևայլ բացականչություններով։

Նկ. 3



Նկ. 4

Կանչելու, հրավիրելու շարժանշաններ

11. Ձեռքի՝ ուսի բարձրությամբ ափը ներքև, մատների կամ ամբողջ դաստակի թափահարում։ «Արի», «Եկեք» նշանակությունը ունի։

12. Երեխային կանչելու ժամանակ օգտագործում են ցուցամատի կամ մի քանի մատների շարժումը՝ ձեռքի ափը սովորաբար ուղղված է վերև։ Ուղեկցվում է դիմախաղերով։ «Ա-րի, ա-րի, ա-րի» վանկատվող արտասանությամբ (նկ. 2)։

13. Մեծ հեռավորությունից իր մոտ կանչելու համար մարդը ձեռքը գլխից վերև պահած թափահարում է. շարժումը արտաքինից դեպի ինքը։

14. Ձեռքի կիսաբաց ափի շրջանաձև թափահարումը հայացքով դեպի խոսողը և երբեմն կիսաշրջված դիրքով՝ հավասար է իրեն հետևելու կանչին (նկ. 3)։

Գոհունակության կամ ճրճվանքի շարժանշաններ

15. Գոհունակության, բավարարվածության արտահայտություն է բռունցք արած ձեռքի բութ մատի վերև բարձրացնելը։ Կարող է նշանակել «Կեցցես», «Լավ է», «Գոհ եմ»։ Երբեմն ծառայում է որպես «Ինչպե՞ս ես» հարցին տրվող դրական պատասխան։

16. Նույն դիրքով, բայց բութ մատը ներքև պարզած նշանակում է «Վատ եմ», «Գործերս լավ չեն», «Սխալ է»։

17. Բաց ափով թեթևակի հարվածը ընկերոջ կամ մերձավորի փորին կամ կողքին խրախուսանքի, ոգևորության, դրվատանքի, գոհունակության նշան է՝ «Ապրես»։

18. Մեկ կամ մի քանի անգամ թեթևակի ուսին կամ մեջքին խփելը նույնպես ունի գոհունակության, խրախուսանքի, քաջալերելու նշանակություն։

19. Կիսաբաց ափով, գլխից վերև ձեռքի արագ պտտեցումը արդեն կատարված կամ մոտալուտ հրճվանքի արտահայտություն է։ Արևմտահայերի մոտ սա հաճախ ուղեկցվում է «Հեյ, հե՜յ» ձայնարկությամբ։

20. Սեփական արժանիքը ցույց տալու համար դուրս ցցված կրծքին են մոտեցնում ձեռքի մատները կամ ափը, երբեմն թեթևակի հարվածելով կրծքին. «Ես եմ արել», «Իմ արածն է»։ Կեցվածքը արտահայտում է հպարտության զգացում, գլուխը սովորականից ավելի վեր է ձգված։

21. Մի փոքր կռացած դիրքով ձեռքերը շփելը սպասվող հրճվանքի, ուրախության կամ մի ինչ-որ լավ բանի արտահայտություն է։

Այլ ինքնուրույն շարժանշաններ

22. Բռունցք արած ձեռքերի ձգված ցուցամատերի իրար հպումը կամ շփումը նշանակում է երկու անձանց՝ հաճախ կնոջ ու տղամարդու մերձավորություն (նկ. 4)։

23. Աջ ու ձախ պարզած ձեռքերի ափերի միաժամանակյա շրջումը նշանակում է «Ի՞նչ կարող եմ անել», «Իմ ձեռքից ի՞նչ է գալիս»։

24. Ցուցամատով քունքին խփելը, երբեմն նաև նույն ձեռքի տարուբերումը նշանակում է, որ խոսքը վերաբերում է հիմար մարդու՝ «Խելքը տեղում չէ»։

25. Ժխտում արհամարհանքով և երբեմն որոշ թերահավատությամբ՝ զրուցակցի հաղորդածի կամ առաջարկածի նկատմամբ արտահայտվում է աջ ձեռքի դաստակի արագ շրջմամբ. ընդ որում, բացված են բութ մատն ու ցուցամատը, իսկ մյուս մատները փակ են։ Սա երբեմն ուղեկցվում է կարճ տևողության ձայնարկությամբ՝ «Ի՜», «Իա՜», «Է՜»։ «Բա այդ եղա՞վ» (նկ. 5)։

26. Անհամբերության նշան է մատներով սեղանը թմբկահարելը կամ տոքերով ռիթմիկ դոփելը։

27. Խնդրանքի, աղաչանքի արտահայտություն է ձեռքով ծնոտը բռնելը և մատներով վերևից ներքև փաղաքշելու շարժում կատարելը (նկ. 6)։

28. Երբ զրուցակիցները ինչ-ինչ պատճառներով միմյանց չեն լսում, ձեռքի բաց ափը ականջի ետևում պահելը նշանակում է «Չեմ լսում», «Բարձր խոսիր», իսկ երբեմն էլ ծաղրական արտահայտություն է («Հը՞»)։

29. Համանման պայմաններում աջ ձեռքի ցուցամատի պտտումը ականջի մոտ նշանակում է «Սպասում եմ զանգիդ», «Զանգահարիր»։

30. Ձեռքի կամ ձեռքերի դաստակների արագ թափահարումը դեպի դուրս նշանակում է «Գնա՛», «Հեռացի՛ր»։ Հաճախ, երբ մեկն ուզում է մյուսին փրկել մոտալուտ վտանգից՝ մյուսներից աննկատ, այն ուղեկցվում է դիմախաղով, մի աչքի թույլ կոկոցումով և գլխի թեթևակի թեքմամբ։ «Հեռացիր. արագ, անմիջապես»։

Նկ. 5

Նկ. 6

31. Երկու ձեռքերը վեր բարձրացնելը և դանդաղ ու սահուն ներքև իջեցնելը նշանակում է «Համեցե՛ք, ներս եկեք»։ Ձեռքը դեպի աթոռը պարզելը նշանակում է նստելու հրավերք։ Մոտ հարաբերությունների դեպքում կարող են հայացքը թեթևակիորեն սահեցնել աթոռի ուղղությամբ և գլուխը թեքել։

32. Վերևից ներքև մի քանի անգամ ծափահարելու նման ձեռքերի շփումը նշանակում է «Վերջացավ։ Ես ձեռքերս լվանում եմ», «Դուրս եմ գալիս խաղից», «Ես գործ չունեմ այլևս» (նկ. 7)։

33. Ցուցամատի և բութ մատի շփումը նշանակում է, որ խոսքը դրամի կամ հարստության մասին է։ Երբեմն կարող է ուղեկցվել աչքի կկոցումով և «Մեջը հաշիվ կա՞» արտահայտությամբ։

34. Արևմտահայերի մոտ բութով և ցուցամատով շրջան արած ձեռքի պարզումը, որը ուղեկցվում է «Քանի՞ է» հարցով նշանակում է, որ խոսքը վերաբերում է ոսկու շուկայական կուրսին։ Նույն հարցը կարելի է տալ բաց ափը վերև, ձեռքը 2-3 անգամ շարժելով աջից ձախ։

ԽՈՍՔՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՇԱՐԺԱՆՇԱՆՆԵՐ

Առանձնապես շատ են տարածված խոսքին արտահայտչականություն հաղորդող շարժանշանները։ Որոշ մարդիկ չեն կարողանում խոսել առանց գլխի, դեմքի, մարմնի շարժումների։ Տեղ ցույց տալու համար նրանք անպայման օգտվում են ձեռքի կամ մատների շարժումներից։

Միշտ չէ, որ ուղեկցող շարժանշանները հաստատում կամ ուժեղացնում

են խոսքային արտահայտությունը, դրանք հաճախ ծառայում են խոսքին որոշակի երանգավորում կամ տրամադրություն հաղորդելու համար։ Այսպես, խոսելիս հաճախակի մատով թափահարելը կամ ներքև ցույց տալը դեռևս չի նշանակում «Այստեղ», այլ պարզապես խոսողի խառնվածքի դրսևորման եղանակ է։



Նկ. 7

Նկ. 8

35. Անծանոթին այս կամ այն տեղը ցույց տալու համար հաճախ են դիմում ձեռքի օգնությանը։ Չեն ասում «Երկրորդ փողոցը, աջից», այլ ասում են՝ «Այն սպիտակ տունը տեսնում եք (մատը պարզելով այդ ուղղությամբ), նրանից աջ։ Այնտեղ կտեսնեք մի սև շենք...» և այլն։ Կողմնորոշման համար ընտրում են փողոցներում քիչ թե շատ աչքի ընկնող առարկաներ՝ արձաններ, շենքեր։

ԽՈՍՔԱՅԻՆ ՈՐՈՇԱԿԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐՆ ՈՒ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՇԱՐԺԱՆՇԱՆՆԵՐ

Այս շարժանշանները կարելի է և չառանձնացնել որպես ինքնուրույն խումբ, քանի որ ձայնարկությունները իրենց բառական իմաստով արտահայտում են ոչ թե հասկացություններ, այլ զգացմունքներ։ Այս առումով որոշ շարժանշանների թվարկումը պայմանական է։ Դրանք կարող են գործածվել ինչպես ինքնուրույն, այնպես էլ բացականչությունների հետ միասին։ Սահմանը սրանց միշև, բնականաբար, շատ հստակ չէ։

Ափսոսանք կամ հոգեկան խոր կսկիծ արտահայտող շարժանշաններ

36. Տղամարդկանց մոտ սովորաբար ափսոսանքն արտահայտվում է վերևից ներքև բռունցքի ուժեղ թափահարումով, եթե նստած է՝ ծնկանը իջնող հարվածով, որն ուղեկցվում է «Վա՜յ», «Թու՜», «Վա՜յ ես քո...» հիշոցով։

37. Կանանց մոտ այդ ափսոսանքն արտահայտվում է ձեռքերի առաջ պարզմամբ. գլխի տարուբերումով, իսկ «Վա՜յ» ձայնարկությունն արտասանվում է ձգվելով, երկարելով։ Հնչերանգի մեջ երբեմն նկատելի են ցավ ու ցավակցություն արտահայտող երանգներ։

38. «Գտա», «Իմացա», «Հիշեցի» արտահայտվում է ճակատին կամ գլխի առջևի մասին ձեռքի թույլ հարվածով, որը ուղեկցվում է «Հա», «Հը» բացականչությամբ։

39. Զայրույթի արտահայտություն է չանչ արած մատներով ձեռքերը գնացողի ետևից պարզելը։ Շարժանշանն ուղեկցվում է «Ա՜ռը քեզ», «Հողե՜մ գլուխդ» արտահայտություններով կամ զանազան այլ անեծքներով։ Օգտագործում են գլխավորապես կանայք (նկ. 8)։

40. Վշտի արտահայտությունը տղամարդկանց մոտ նստած դիրքով երկու ձեռքերով գլուխն ափերի մեջ առնելն է, երբեմն ձեռքերով ծածկում են աչքերը։ Տղամարդիկ, առհասարակ, աշխատում են զսպել և ցույց չտալ իրենց զգացմունքները։

41. Սգի կամ վշտի արտահայտությունները կանանց մոտ ավելի ընդգծված են։ Մատների ծայրերով երեսների վրա շարժումներ անելը հիշեցնում է գլխից մազեր պոկելը։

42. Ձեռքերի ափերով ծնկները շոյելը ուղեկցվում է մրմնջոցներով։ Կատարվում է ընդմիջումներով, որի ընթացքում ձեռքերը բարձրանում են վերև (աղոթքի ժամանակ արվող շարժման նման) և կրկին դրվում ծնկներին։ Հատկապես տարածված է ծեր կանանց շրջանում։

43. Կանանց մոտ վշտի արտահայտություն է նստած դիրքում մարմնի դանդաղ օրորումը մեկ կողմից մյուսը։

44. Վշտի արտահայտությունը՝ ձեռքով կրծքին խփելը՝ կանայք հաճախ ուղեկցում են «Ամա՜ն», «Վա՜յ», «Վո՜ւյ» ձայնարկություններով։

Արհամարհանքի կամ վիրավորանքի շարժանշաններ

45. Կրծքի բարձրությամբ ձեռքի դաստակի՝ ափը ներս, մի քանի անգամ կրկնվող շարժումներ, որոնք կարող են ուղեկցվել «Գնա՜, գնա՜, գլուխ մի տար», «Գնա՜, ջանմ, գնա՜» և այլ արտահայտություններով։

46. Լեզու հանելը արհամարհանքի, չհամաձայնելու նշան է (երեխաների մոտ)։

47. Մատներով քիթը վեր բարձրացնելը, բացված մատներով ձեռքը կամ իրար միացրած ձեռքերը քթի վրա պահելը դիմացինին զայրացնելու, նվաստացնելու նշան է (երեխաների մոտ)։

48. Ցուցամատի և միջամատի արանքից բութ մատը պարզելը վիրավորական շարժանշան է տղամարդկանց շրջանում։ Այն կարող է արտահայտել նաև «Քո ասածը չի լինի» իմաստին մոտ բովանդակություն։ Կարող է ուղեկցվել «Ա՜ռը քեզ» արտահայտությամբ։

49. Աջ ձեռքի կտրուկ դեպի վերև ձգվող շարժումը ունի արհամարհական իմաստ և կարող է ուղեկցվել «Թքած», «Հերն էլ անիծած» արտահայտություններով։

50. Սպառնալիքի նշան է հարվածային դիրքի ընդունման համար ձեռքի շարժումը։ Հարվածը չի կատարվում։ Ձեռքը մնում է օդում։ Ուղեկցվում է «Կտամ», «Կխփեմ» և այլ խոսքերով։

Հարալեզվական շարժանշանների օգտագործումը առանձնապես հաճախակի է ձայնարկություններում և խիստ չտարորոշված ձայների դեպքում։ Սրանք գործառական ամենարազմազան կիրառություններ ունեն և զգալի մասով բազմիմաստ են. ընդ որում, այդ իմաստները հանդես են գալիս որոշակի հնչերանգով տվյալ իրավիճակում և ենթատեքստում։ Ձայնարկությունները և չտարորոշված ձայները հաճախ են գործածվում առօրյա-խոսակցական լեզվում զարմանքի, ուրախության, զայրույթի և այլ զգացմունքների արտահայտման ժամանակ։ Ահա առավել գործածականներից մի քանիսը.

ՅԱ՛, ՅԱ՛—զարմանքի կամ ափսոսանքի արտահայտման համար։
ՏԵՂ՛—պայթական ձայն՝ թեթևակի զարմանքի դեպքում (նաև ժխտում)։
ԹՈ՛Ի—զայրույթ, ափսոսանք։
Ա՛Յ—«Ահա թե ինչ եղավ» իմաստով, հատկապես պահպանվում է «Այ, տեսա՞ր» արտահայտության հնչերանգը։
ՎԱ՛Խ—արտահայտում է ափսոսանք։ Կարող է կրկնվել մի քանի անգամ։
Է, Է՛Յ—զարմանք՝ կասկածանքի հետ։
ՎԱ՛Յ (ԵՍ ՔՈ)—արտահայտում է զայրույթ, հանդիմանություն, անսպասելի իրավիճակի ժամանակ։
ՀԱ՛, ԲԱ՛ (ձայնավորի երկարացում)—«Ուրիշ ի՞նչ կուզեիր» իմաստով։
ԴԵ՛ (մեկ անգամ)—աշխատանքի, գործի կոչել։
ԴԵ՛, ԴԵ՛ (հրամայական հնչերանգով)—սպառնալիք, զգուշացում։
ԴԵ, ՓԸ՛ԽԿ—երեխաներին վախեցնելու, հեռացնելու բացականչություն։
ԷԼԻ՛—բառ, արտահայտում է խնդրանք, աղաչանք։ Արտաբերվում է բարձրացող հնչերանգով։ Օրինակ՝ «Լավ, էլի՞»։
Է՛ԼԻ—կտրուկ բարձրացող և իջնող հնչերանգով արտահայտում է դյուրագրգիռ վիճակ, վրդովմունք. «Է՛լի եկար»։
Է՛Է (իջնող հնչերանգով)—թեթևակի զարմանք, ափսոսանք։
Է՛ Է՛ (երկարացում բարձրացող հնչերանգով)—հիասթափություն, նեղսրտում։
Ո՛ՒՖ (հաճախ շփականի երկարացմամբ)—բորբոքում, գրգռում, ցավ։
Ո՛ՒՖ (ձայնավորի երկարացմամբ և տոնի բարձրացմամբ)—հիացմունք, խինդ։
Օ՛Ֆ, Ո՛ՒԽ, ՕԽԱ՛Յ—հաճույքի, հրճվանքի, հանգստանալու արտահայտություն։
ԱԽ (հոգոցով)—դժբախտության կամ վշտի արտահայտություն։
Է՛ (Հ) (երկարացնելով և թույլ «հ»-ով)—բորբոքում, անբավարարվածություն։
Է՛ (Հ), Ո՛Ի (Հ)—կարճ, կոկորդային ձայն՝ նշանակում է «Բանի տեղ մի դիր»։
Ա՛ (ձայնավորի երկարացում)—«Հիշեցի», «Հասկացա»։
ՀԵՏՈ՞—Անբավականությամբ խոսքը կտրելու արտահայտություն։ Կարող է նշանակել «Ձեռք քաշիր», «Վերջացրու»։
ՊԱ՛ (Հ)—Մի քանի անգամ կրկնվող բացականչությունը կարող է արտահայտել մեկի նկատմամբ ծաղրական, արհամարհական վերաբերմունք։ Երբեմն ուղեկցվում է «Իրենից ի՞նչ է ներկայացնում» արտահայտությամբ։
Ի՛ (կարճ, իջնող հնչերանգով)—թեթևակի զարմանք։

ПАРАЛИНГВИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА В АРМЯНСКОЙ СРЕДЕ

АМАЛИЯ ХАЧАТРЯН, РОБЕРТ ТОХМАХЯН

Резюме

Паралингвистические средства выражения, под которыми подразумеваются нами мимика, жесты, телодвижения, сопровождающие речь, обычно связываются с психологическим состоянием говорящего. И действительно, такие виды эмоций, как радость, гнев, ужас, печаль универсальны и находят свое выражение в мимике, жестах, интонации и телодвижениях независимо от языковой материи. Поэтому такие эмоциональные состояния можно угадать, не зная содержания сообщения и даже языка.

Собранные и квалифицированные жесты, используемые в армянской среде, показывают, что многие из них сопровождают речь говорящих, делая ее более выразительной и эмоциональной, и лишь часть из них имеет самостоятельное употребление, заменяя определенные речевые высказывания. Все они имеют знаковый характер и потому должны рассматриваться как область, относящаяся как к семиотике, так и к языкознанию.